



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ք. Երևան, Զաքիյան 7-2

info@advocates.am

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**«ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ՝
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ՍԱՆԿՑԻԱ
ԿԻՐԱՌԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՈՎ**

21.11.2017թ.

ՆԱԽԱԲԱՆ

«Դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի (**այսուհետ՝ Նախագիծ**) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը կատարում է ուսումնասիրություններ և նախապատրաստում է առաջարկությունների փաթեթ:

Ելնելով Նախագծի ծավալից և փաստաբանների համար կարևորության տեսակետից, առաջարկությունները կներկայացվեն երկու փուլով: Առաջին փուլով (սույնով) ներկայացվում է Նախագծով առաջարկվող՝ փաստաբանների նկատմամբ տուգանքը՝ որպես դատական սանկցիա կիրառելու իրավակարգավորման մասով առաջարկությունները, իսկ երկրորդ փուլով՝ Նախագծի վերաբերյալ մյուս առաջարկությունները:

Ա. Նախագծով առաջարկվող փոփոխությունը

Գործող ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված են 4 տեսակի սանկցիաներ՝

- 1) նախազգուշացում.
- 2) նիստերի դահլիճից հեռացնել.
- 3) դատական տուգանք.

4) դատախազին կամ փաստաբանին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմել:

Նույն հոդվածի 7-րդ հոդվածի համաձայն՝ գործի քննությանը մասնակցող դատախազի և գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ կարող են կիրառվել սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված սանկցիաները: Գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելն իրականացվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշմամբ: Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դատական սանկցիան պարտադիր հիմք է դատախազի կամ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

Նախազծի 75-րդ հոդվածի համաձայն՝

1. Գործի քննությանը մասնակցող դատախազի և գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ չի կիրառվում դատական նիստերի դահլիճից հեռացում դատական սանկցիան:

2. Գործի քննությանը մասնակցող դատախազի և գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելուց հետո, դատական սանկցիայի մասին որոշումը կամ արձանագրային որոշման դեպքում՝ արձանագրության քաղվածքը դատարանն ուղարկում է համապատասխանաբար Գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատի նախագահին:

3. Դատական սանկցիա կիրառելու մասին որոշումը չի բացառում նույն արարքի համար դատախազի կամ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հնարավորությունը:

Գործող ՀՀ դատական օրենսգրքով դատարանն իրավասու չէ փաստաբանի նկատմամբ կիրառել տուգանք՝ որպես դատական սանկցիա:

Նախագծով առաջարկվում է նշված իրավադրույթը հանել և դատարանին թույլատրել «տուգանք» դատական սանկցիան կիրառել նաև փաստաբանների նկատմամբ:

Բ. Առաջարկվող փոփոխության սոցիալական անհրաժեշտության վերաբերյալ

Նախագծի հիմնավորման մեջ որևէ կերպ չի անդրադարձ չկա փաստաբանների նկատմամբ կիրառվող դատական սանկցիաների շրջանակի ընդլայնման սոցիալական և իրավական անհրաժեշտությանը, ուստի՝ պարզ չէ սույն փոփոխությամբ հետապնդած նպատակը, առաջարկվող փոփոխության հիմնավորվածությունը և ակնկալվող արդյունքը:

Գտնում ենք, որ առաջարկվող փոփոխության սոցիալական անհրաժեշտությունը բացակայում է, հետևյալ հիմնավորումներով՝

Գործող ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որպես դատական սանկցիա՝ դատարանն իրավասու է դիմել ՀՀ փաստաբանների պալատ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պահանջով:

ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (այսուհետ՝ փաստաբանների պալատ) սույն օրենքի հիման վրա ստեղծված փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն է (...):

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի խնդիրն է վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման ... նկատմամբ:*

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանների պալատի խորհուրդը փաստաբանների պալատի գործադիր, ինչպես նաև կարգապահական վարույթ իրականացնող մարմինն է:*

ՀՀ Սահմանադրությամբ և ընթացիկ օրենսդրությամբ լինելով փաստաբանների ինքնակառավարման մասնագիտական կառույց՝ ՀՀ փաստաբանների պալատն առ այսօր իրականացնում է փաստաբանների իրավաչափ վարքագծի նկատմամբ վերահսկողության և փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթը և ունի լիազորությունների համախումբ, որն ուղղված է այդ գործառույթի հավուր պատշաճի իրականացմանը:

Քանի որ Նախագծով առաջարկվող փոփոխությունը վերաբերում է փաստաբանների նկատմամբ դատարանի կողմից կարգապահական ներգործության կառուցակարգերի ավելացմանը, անդրադարձ կարվի ներկայիս իրավակարգավորման պայմաններում դատարանի դիմումի հիման վրա հարուցվող կարգապահական վարույթներին վերաբերող տվյալներին:

Նախ՝ հարկ է նշել, որ, հաշվի առնելով դատարանի՝ որպես արդարադատության իրականացման բացառիկ լիազորություն և պետության անունից արդարադատության երաշխավորի առաքելություն ունեցող ինստիտուտի հանրային-իրավական կարգավիճակը՝ դատարանի դիմումի հիման վրա **Փաստաբանների պալատի կողմից կարգապահական վարույթը հարուցվում է իրավունքի ուժով՝** պարտադիր կարգով՝ ի տարբերություն կարգապահական վարույթի հարուցման այլ առիթների, երբ Փաստաբանների պալատի նախագահն սկզբնապես գնահատում է դիմումում նշված հանգամանքներում Օրենքի կամ Փաստաբանների վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրք**) կանոնների առերևույթ խախտման առկայության հարցը և կարող է մերժել վարույթի հարուցումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.¹-րդ

հողվածի 1-ին մասի 4-րդ կետ, 7-րդ մասի 2-րդ պարբերություն, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասեր, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին և 9-րդ մասեր):

Երկրորդ՝ Փաստաբանների պալատի կողմից հարուցված կարգապահական վարույթն իրականացվում է հրապարակայնության և կողմերի մրցակցության պայմաններում, Փաստաբանների պալատի խորհրդի որոշումները տեղադրվում են պաշտոնական կայքում և հասանելի են բոլորին (Փաստաբանի նկատմամբ վարույթի իրականացման կարգի 4-րդ և 7-րդ հոդվածներ): Բացի այդ, ապահովելու համար փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման առավելագույն օբյեկտիվություն՝ Փաստաբանների պալատի նախագահը կարգապահական վարույթ հարուցելուց հետո որևէ կերպ չի ներգրավվում գործի հետագա քննությանը, կարգապահական գործի քննության ժամանակ Փաստաբանների պալատի խորհրդի նիստին չի մասնակցում (Օրենքի 39.6 հոդվածի 3-րդ մաս): Կողմերն ազատ են դատական կարգով, քաղաքացիական դատավարության շրջանակներում բողոքարկել ինչպես Փաստաբանների պալատի նախագահի, այնպես էլ խորհրդի որոշումները: Նման կերպ ապահովվում է կարգապահական վարույթի օրինականության և հիմնավորվածության նկատմամբ դատական վերահսկողությունը:

Դատական սանկցիաների հիման վրա Փաստաբանների պալատի կողմից հարուցված կարգապահական վարույթների առկա վիճակագրությունը ևս խոսում է այն մասին, որ գործող կարգով կարգապահական գործերի քննությունը չունի արդյունավետության խնդիր: Մասնավորապես, միայն 2015-2017թթ. ընթացքում (մինչև ս.թ. հոկտեմբերի 30-ի դրությամբ) դատական սանկցիաների հիման վրա Փաստաբանների պալատի կողմից հարուցվել են 107 կարգապահական վարույթներ (**մոտ 80 վարույթ հարուցվել է 2017թ. հունիս-հոկտեմբեր ամիսներին**), որոնցից ավարտվել են 42-ը, 65-ն ընթացքի մեջ է, 33 գործ կարճվել է, 9-ով փաստաբանները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության՝ նկատողության, խիստ նկատողության կամ իրենց հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցելու տեսքով:

Հարկ է ընդգծել նաև, որ դատարանների կողմից կիրառված սանկցիաները հաճախ լինում են հիմնազուրկ և առարկայազուրկ, ինչով լրջորեն սահմանափակվում են փաստաբանների իրավունքները: Մասնավորապես, 2017թ. հարուցված՝ փաստաբանի գործով դատարանը քրեական գործով դատաքննության ընթացքում նախ՝ որոշում է կայացրել դատական նիստը հետաձգելու մասին՝ ընդ որում, առանց նշելու հաջորդ դատական նիստի ժամկետը, իսկ երբ փաստաբանն արդեն հեռացել էր, դատարանը վերսկսել է դատական նիստը և պարզելով, որ պաշտպանը ներկա չէ, որոշում է կայացրել դիմել ՀՀ փաստաբանների պալատ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով: Նման հիմնազուրկ դատական սանկցիաներ Փաստաբանների պալատի պրակտիկայում բավականին հաճախ են հանդիպում, և շնորհիվ նրա, որ գործող օրենսդրությամբ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումը կայացնում է Փաստաբանների պալատը՝ փաստաբաններին հաջողվել է զերծ մնալ անհիմն պատասխանատվության ենթարկվելուց:

Ավելորդ չէ նշել, որ Փաստաբանների պալատը երբևէ չի ունեցել կորպորատիվիստական հակումներ և հանդես չէ եկել իրավազանց փաստաբանների անհիմն և միակողմանի պաշտպանությամբ: Դրա վկայությունն են ինչպես Կանոնագրքի 4.1 ենթակետը, որը սահմանում է դատական մարմիններում գործող վարվելակերպի կանոններին ենթարկվելու փաստաբանների պարտականությունը, այնպես էլ պարբերաբար անցկացվող՝ փաստաբանների վերապատրաստման դասընթացները, Կանոնագրքի 1.1 ենթակետը, որի շրջանակներում սահմանված է փաստաբանի առաքելությունը արդարադատության շահերին ծառայելու, ինչպես նաև ՀՀ փաստաբանական դպրոցում դասավանդվող հատուկ ուղղվածության առարկաները՝ (Փաստաբանի վարքագծի կանոններ, Դատավորի էթիկա և այլն), որոնց շրջանակներում փաստաբաններին և Փաստաբանական դպրոցի ունկնդիրներին ներկայացվում է այն մոտեցումը, որ փաստաբանի սոցիալական կարգավիճակը սահմանափակված չէ միայն իր վստահորդի շահերի պաշտպանությամբ, այլ

ընդգրկում է արդարադատության իրականացմանը նպաստելու գործառույթ, որը ենթադրում է կոռեկտ և արժանավայել հարաբերություններ դատարանի հետ:

Մի շարք դատավորներ հաջողությամբ դասավանդում են ինչպես Փաստաբանական դպրոցում, այնպես էլ փաստաբանների համար կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին, ինչը վկայում է փաստաբանների համայնքի և դատական իշխանության միջև առկա առողջ և արդյունավետ մասնագիտական համագործակցության մասին:

Միաժամանակ, Փաստաբանների պալատը՝ որպես սահմանադրական ինստիտուտ հանդիսացող փաստաբանության շահերը ներկայացնող և պաշտպանող միակ կառույցը, Օրենքով ունի անկախության և ինքնակառավարման ողջամիտ երաշխիքներ և կառուցակարգեր, որոնք ապահովում են փաստաբանների և փաստաբանության՝ իբրև իրավապաշտպան գործունեության անհրաժեշտ ինքնաբավությունը և սոցիալական կարևոր դերի իրացումը՝ զերծ լինելով որևէ արտաքին ճնշումից և ազդեցությունից: Նման կառուցակարգերից մեկը փաստաբանների վարքագծի իրավաչափության քննության լիազորությունն է, որով մի կողմից ապահովվում է փաստաբանի ինստիտուցիոնալ անկախությունն ու գործառութային ինքնուրույնությունը դատական և այլ պետական մարմինների հետ հարաբերություններում, իսկ մյուս կողմից անհրաժեշտ գործիքակազմ է տրամադրում Փաստաբանների պալատին՝ երաշխավորելու փաստաբանների և փաստաբանության ազատ և անկաշկանդ գործունեությունը: Եթե փաստաբանների վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությունը վերապահվի պետական մարմնին, ապա դա բացասական ազդեցություն կունենա փաստաբանության ինստիտուտի անկախության մակարդակի և հետագա զարգացման վրա:

9. Առաջարկվող փոփոխության իրավաչափության վերաբերյալ

Դատարանի կողմից փաստաբանների նկատմամբ «տուգանք» դատական սանկցիա կիրառելու լիազորության տրամադրումը կարող է ստեղծել ՀՀ Սահմանադրությանը հակասող պրակտիկայի ձևավորման ու փաստաբանական գործունեությանն առնչվող միջազգային չափորոշիչներին հակասելու վտանգ:

«Սահմանադրության 64-րդ հոդվածի համաձայն՝ 1. Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

2. Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

«Սահմանադրության հիշյալ իրավադրույթը իրավաբանական օգնություն ստանալու հիմնարար սահմանադրական իրավունքի պատշաճ իրացումն ուղղակիորեն կապում է անկախության երաշխիքների հիման վրա գործող փաստաբանության ինստիտուտի հետ՝ վերջինիս տալով սահմանադրական կարգավիճակ:

Սույն համատեքստում հատկանշական է «Սահմանադրական դատարանի 05.04.2016թ. ՍԴՈ 1263 որոշման մեջ արտահայտած դիրքորոշումն առ այն, որ փաստաբանության՝ որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը բարձրացնելով սահմանադրական մակարդակի՝ պետությունն ընդլայնում է որակյալ իրաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները՝ ի կատարումն «Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների:

Երբ համադրում ենք «Սահմանադրության 64-րդ հոդվածի դրույթները և «Սահմանադրական դատարանի նշյալ մեկնաբանությունը, ակնհայտ է դառնում, որ սահմանադիրը որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն ուղղակիորեն աղերսում է անկախության և ինքնակառավարման վրա հիմնված փաստաբանության ինստիտուտի գոյության հետ:

Իսկ փաստաբանի անկախության գաղափարը ենթադրում է նախևառաջ նրա անկախությունն արտաքին ճնշումներից, որոնք, մասնավորապես, կարող են գալ պետական ինստիտուտներից, ինչպես նաև այնպիսի նորմատիվ կառուցակարգերից, որոնք կարող են կաշկանդիչ պայմաններ ստեղծել

փաստաբանի համար պետության հետ հարաբերություններում և ինքնագրաքննության պատճառ դառնալ: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ անկախ փաստաբանության գոյությունը ենթադրում է պետության անհարկի միջամտության բացառում: Սրանով է նաև պայմանավորված Օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված՝ փաստաբանության հասկացության բովանդակությունը, որի համաձայն՝ *փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:*

Փաստաբանությունը գործում է անկախության, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա:

Փաստաբանի անկախությունը քննարկելիս կարևոր է հաշվի առնել նաև Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը, որը վերաբերում է փաստաբանական գործունեությանը: Ըստ այդմ, *փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:*

Վերոհիշյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի նորմատիվ շարադրանքի հիմնական իմաստն ու էությունը մանրամասնեցված է ընթացիկ օրենսդրությամբ և, մասնավորապես, Օրենքով:

Համադրելով մեջբերված իրավական կանոնակարգումները՝ կարող ենք ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված փաստաբանության անկախության ու ինքնակառավարման պահանջները մեկանաբանել որպես այնպիսի նորմատիվ երաշխիքների և կառուցակարգերի առկայություն, որոնք կապահովեն փաստաբանության՝ որպես քաղաքացիական հասարակության և իրավապաշտպան սահմանադրական ինստիտուտի կառուցակարգային և գործառնական ինքնուրույնությունը մարդու և քաղաքացու իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ընթացքում և մասնագիտական

ինքնակառավարում իրականացնելիս: Սույն համատեքստում հատկապես կարևորվում է Փաստաբանների պալատի կողմից փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթներ հարուցելու, քննելու և որոշում կայացնելու լիազորությունը, որը հանդիսանում է փաստաբանության անկախության և ինքնակառավարման հիմնական դրսևորումներից մեկը:

Հետևաբար, առաջարկվող փոփոխությունն իրական վտանգ է ստեղծում ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի դրույթների նորմատիվ էությունը խախտող պրակտիկայի ձևավորման համար, երբ դատարանները ձեռք կբերեն անհամաչափ լծակ փաստաբանների նկատմամբ:

Սույն խնդիրը քննարկելի է նաև ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքի տեսանկյունից: Նշված հոդվածի համաձայն՝ *հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:*

Երբ համադրում ենք սույն սկզբունքը ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի և առաջարկվող փոփոխությամբ նախատեսված կառուցակարգերի հետ, ակնհայտ է դառնում, որ քննարկվող փոփոխությունը չի բավարարում նաև համաչափության սահմանադրական սկզբունքի պահանջներին, այն է՝ պարզ չէ, թե ինչպիսի սահմանադրական նպատակ է հետապնդում իրավաբանական օգնության իրավունքի և փաստաբանության անկախության և ինքնակառավարման սկզբունքի սահմանափակմամբ դատարանին փաստաբանների նկատմամբ տուգանք դատական սանկցիայի կիրառման լիազորության վերապահումը, ընտրված միջոցները ևս պիտանի և անհրաժեշտ չեն, քանզի չեն ապահովում փաստաբանի ենթադրյալ կարգապահական խախտման գործի պատշաճ և համակողմանի քննությունն ու փաստաբանի համար այլ ընթացակարգային երաշխիքներ:

Սույն առումով կարևոր է մեջբերել Կանոնագրքի այն հատվածները, որոնք հատկապես վերաբերում են փաստաբանի անկախությանը:

Կանոնագրքի 2.1 ենթակետի համաձայն՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս փաստաբանը պետք է անկախ լինի, այսինքն՝ ազատ ազդեցություններից և, հատկապես, այնպիսի ազդեցություններից, որոնք կարող են ծագել փաստաբանի անձնական հետաքրքրություններից կամ արտաքին ճնշումից և որը կարող է բացասաբար ազդել վստահորդի գործի վրա: Փաստաբանը պետք է խուսափի իր անկախության թուլացումից և ուշադիր լինի իր մասնագիտական չափորոշիչների հանդեպ, որպեսզի նրանք չհարմարեցնի դատարանին կամ երրորդ անձանց գոհացնելու համար:

Կանոնագրքի 4.1 ենթակետին համապատասխան՝ դատարանում վարվելակերպի կանոնաններին պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Կանոնագիրքը, որում հաշվի է առնված նաև փաստաբանի վարքագծի կանոնակարգման միջազգային լավագույն փորձը, փաստաբանի անկախությունը դիտարկում է երկու՝ ներքին և արտաքին առումներով: Սույն փաստաթղթի առարկայի տեսանկյունից անդրադառնանք փաստաբանի անկախության արտաքին բաղադրիչին: Կանոնագրքի նշյալ դրույթների դիտանցումը թույլ է տալիս եզրահանգել, որ փաստաբանի անկախությունն արտաքին բացասական ազդակներից նախևառաջ հանգում է պետական մարմինների և, մասնավորապես, դատարանի հետ հարաբերություններում անկաշկանդ և անվախ վարքագծի դրսևորմանը և իր օրինական գործողությունները դատարանի կամքով չպայմանավորելուն:

Ակներևաբար, դատարան-փաստաբան հարաբերությունների բնույթը և փաստաբանի անկախությունը դատարանի հետ շփումներում և իր վստահորդի շահերը պաշտպանելիս գործնականում հնարավոր է, եթե դատարանն իրավասու

չէ, առանց հակակշռման բավարար երաշխիքների, իրավական ներգործության միջոցներ կիրառել փաստաբանի նկատմամբ՝ վերջնական որոշման ձևով:

Այս իմաստով, Նախագծի առաջարկվող կարգավորումներն էլ են խնդրահարույց, մասնավորապես՝

- **Նախագծի 70-րդ հոդվածի 2-րդ մասով** սահմանվել է. «2. *Դատական սանկցիա կարող է կիրառվել, երբ դատավարության մասնակիցը նրա ներկայացուցիչը կամ դատարանի դահլիճում ներկա այլ անձը՝*

1) *չի կատարում դատարանի որոշումները **կամ կարգադրությունները**, խոչընդոտում է դատական նիստի բնականոն ընթացքը կամ կատարում է դատական նիստի կարգը խախտող այլ գործողություն. (...)*»:

Ներկայումս գործող ՀՀ դատական օրենսգրքում նախատեսված է դատական սանկցիայի կիրառում դատավորի **օրինական** կարգադրությունները չկատարելու համար, մինչդեռ նախագծում «օրինական» եզրույթը չի նախատեսվել, ինչի արդյունքում ստացվում է, որ դատարանի ցանկացած կարգադրություն, այդ թվում՝ անօրինական, պարտադիր են բոլորի համար և չկատարելու դեպքում կառաջանա սանկցիայի կիրառման հիմք:

- **Նախագծի 71-րդ հոդվածով** սահմանվել են դատական սանկցիաների տեսակները, որտեղից հանվել է ներկայումս գործող ՀՀ դատական օրենսգրքով սահմանված դատախազին կամ փաստաբանին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելու դատական սանկցիան, իսկ Նախագծի 75-րդ հոդվածով սահմանվել է դատախազի և փաստաբանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու առանձնահատկությունները:

Նշված դրույթների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նախատեսվող 3 դատական սանկցիաներից (նկատողություն, դատական նիստի դահլիճից հեռացում, դատական տուգանք) դատախազի և փաստաբանի

նկատմամբ չի կիրառվելու միայն դատական նիստերի դահլիճից հեռացում դատական սանկցիան:

Միևնույն ժամանակ Նախագծի 75-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանվել է, որ գործի քննությանը մասնակցող դատախազի և գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելուց հետո, դատական սանկցիայի մասին որոշումը կամ արձանագրային որոշման դեպքում՝ արձանագրության քաղվածքը դատարանն ուղարկում է համապատասխանաբար Գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատի նախագահին: Դատական սանկցիա կիրառելու մասին որոշումը չի բացառում նույն արարքի համար դատախազի կամ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հնարավորությունը:

Վերոնշյալ դրույթներից առավել քան ակնհայտ է, որ Նախագծով ուղղակիորեն նախատեսվել է նույն արարքի համար կրկնակի պատասխանատվություն:

Ընդ որում, ներկայումս գործող դատական սանկցիան փաստորեն դառնալու է լրացուցիչ սանկցիա, բացի այդ, չի բացառվում, որ կարգապահական վարույթի շրջանակներում դատախազի կամ փաստաբանի նկատմամբ կարող է կիրառվել նաև այլ իրավական ակտով սահմանված կարգապահական տույժ:

Արդյունքում, դատախազը կամ փաստաբանը կարող են նույն արարքի համար կրկնակի պատասխանատվության ենթարկվել՝ դատական սանկցիայի և կարգապահական տույժի տեսքով:

Վերոնշյալ կարգավորումը ուղղակիորեն հակասում է օրինականության, կրկին դատվելու և պատժի (պատասխանատվության) համաչափության սկզբունքներին:

Այսպես.

«Սահմանադրության 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:

Կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքը (non bis in idem) սահմանված է նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին

միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ մասում, որի համաձայն՝ *ոչ ոք չպետք է կրկին դատվի կամ պատժվի այն հանցագործության համար, որի համար նա արդեն վերջնականապես դատապարտվել է կամ արդարացվել՝ յուրաքանչյուր երկրի օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:*

Նույն արարքի համար կրկին չդատվելու իրավունքը ամրագրված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիային (**այսուհետ նաև՝ Կոնվենցիա**) կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածում, որի համաձայն՝ *Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում կրկին անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (**այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան**) Սերգեյ Զոլոտովսինն ընդդեմ Ռուսաստանի գործով արտահայտել է հետևյալ դիրքորոշումը՝ «...» 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածում «հանցագործություն» տերմինի օգտագործումը չի կարող արդարացնել այդ սկզբունքի վերաբերյալ ավելի սահմանափակ մոտեցումը: Դատարանը կրկին հաստատում է, որ Կոնվենցիան պետք է մեկնաբանվի և կիրառվի այնպես, որպեսզի դրանով երաշխավորված իրավունքները լինեն գործնական և արդյունավետ, այլ ոչ թե տեսական և վերացական:

Եվրոպական դատարանը իր նախադեպային իրավունքով, զարգացնելով կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքը, միևնույն ժամանակ արձանագրել է, որ «նույն արարքի համար» ձևակերպումը պետք է հասկանալ ոչ թե հանցանքի իրավական որակման, այլ փաստական նկարագրության իմաստով:

Այս առումով, նշված սկզբունքը տարածվում է ոչ միայն հանցագործությունների քրեական օրենսգրքով արգելված արարքների, այլ նաև վարչական իրավախախտումների վրա: Եթե նույն արարքը համապատասխանում է թե հանցագործության և թե վարչական իրավախախտման կազմերին, և անձը վերջնական որոշմամբ ենթարկվել է պատասխանատվության վարչական

իրավախախտման համար, ապա հանցագործության մեղադրանքով նրա նկատմամբ չի կարող վարույթ սկսվել:

Վերոնշյալից առավել քան ակնհայտ է, որ նույն արարքի համար կրկնակի պատասխանատվության (այդպիսի հնարավորության) նախատեսումը հակասում է ՀՀ կողմից վավերացված եվրոպական կոնվենցիայով երաշխավորված հիմնարար սկզբունքին:

- **Նախագծի 76-րդ հոդվածի 3-րդ մասի** համաձայն՝ դատական սանկցիա կիրառելու որոշման բողոքարկումը չի կասեցնում որոշման կատարման ընթացքը, եթե վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանը որոշման կատարումը կասեցնելու մասին որոշում չի կայացրել:

Այս կարգավորումը վտանգ է պարունակում, եթե դատարանն անհիմն դատական տուգանք կիրառի: Փաստաբանի նկատմամբ անհիմն դատական տուգանք նշանակելու և ԴԱՀԿ ծառայությանը կատարման ներկայացնելու դեպքում, փաստաբանի գույքի կամ դրամական միջոցների վրա կարող է առնվազն արգելանք դրվել, իսկ վերադաս ատյանի կողմից հետագայում որոշման կատարման կասեցումը (որը վճռաբեկ ատյանի դեպքում երկարատև գործընթացի արդյունքում կարող է լինել) արդեն չի կարող վերացնել կիրառված արգելանքը կամ արդեն գումարի կատարված բռնագանձումը:

Ինչպես տեսնում ենք այս իրավակարգավորումները սպառնում են փաստաբանի անկախությանը:

Սույն համատեքստում գործող ՀՀ դատական օրենսգրքով սահմանված կանոնակարգումները բավարարում են նշված պահանջին այնքանով, որ դատարանին անմիջականորեն տալիս են միայն փաստաբանին նախազգուշացնելու հնարավորություն, իսկ առավել լուրջ դեպքերի համար դատարանին վերապահում են միայն փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու խնդրով Փաստաբանների պալատ դիմելու իրավունք՝ սույն հարցով վերջնական որոշման լիազորությունը թողնելով Փաստաբանների պալատին:

Հատկանշական է նաև խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային փորձը: Այսպես՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից հրապարակված չափորոշիչների 6.1 կետի համաձայն՝ *փաստաբանների կողմից իրենց մասնագիտական պարտականություններն արդյունավետ իրագործելու համար ներպետական և միջազգային իրավունքով պետք է ստեղծվեն համապատասխան ընթացակարգային երաշխիքներ, ինչպես նաև առկա լինեն անհրաժեշտ կառուցակարգեր, որոնք փաստաբաններին զերծ կպահեն իրենց աշխատանքային գործունեության ընթացքում ճնշումներից, կոռուպցիայից և ահաբեկումներից:*

6.3 կետի համաձայն՝ *Կառավարությունները պարտավոր են երաշխավորել փաստաբանների կողմից իրեն գործառույթների իրականացումը՝ առանց ահաբեկման, խոչընդոտման, բռնության կամ ոչ պատշաճ միջամտության. գ. փաստաբանների նկատմամբ անհրավաչափ քրեական հետպանդման, դրա սպառնալիքի, վարչական կամ տնտեսական սանցկիաների կիրառման բացառումը փաստաբանների օրինական և փաստաբանների վարքագծի կանոններին համապատասխանող գործունեության ընթացքում:*

ՄԱԿ-ի Փաստաբանների դերի վերաբերյալ հիմնական սկզբունքները ևս անդրադառնում են փաստաբանության անկախության սկզբունքին՝ այն դասելով փաստաբանության անկյունաքարային երաշխիքների թվին:

Բացի այդ, որպես փաստաբանության անկախության կանխադրույթի իրացման գործնական երաշխիք նշված Սկզբունքների 28-րդ կետը սահմանում է, որ փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել կա՛մ փաստաբանների ինքնակառավարման մարմնի կողմից ստեղծված անկողմանական հանձնաժողովի, կա՛մ օրենքով ստեղծված անկախ մարմնի և կամ էլ դատարանի կողմից:

Համանման դրույթներ է պարունակում նաև Եվրոպայում փաստաբանի մասնագիտության հիմնարար սկզբունքների և եվրոպական փաստաբանի վարքագծի կանոնագրքում:

Վերոշարադրյալը գալիս է վկայելու, որ փաստաբանության ինստիտուտի և դրանից բխող՝ փաստաբանների անկախության սկզբունքն ունի միջազգային

ճանաչում և ստացել է համապատասխան ամրագրում միջազգային տարբեր հեղինակավոր փաստաթղթերում և ենթադրում է պետությունների կողմից համապատասխան օրենսդրական և վարչական, միջոցների ձեռնարկում պրակտիկայում փաստաբանական գործունեության նկատմամբ անհարկի և անիրավաչափ միջամտության բացառման ուղղությամբ: Ավելին՝ փաստաբանները կարգապահական պատասխանատվության կարող են ենթարկվել միայն համապատասխան վարույթի հարուցման և իրականացման պարագայում: Սրանից հետևում է, որ փաստաբանի նկատմամբ որպես դատական սանկցիա՝ տուգանքի նշանակումը դատարանի կողմից՝ առանց փաստաբանին համապատասխան ընթացակարգային երաշխիքների տրամադրման, այդ թվում իրեն դատական սանկցիայի ենթարկելու հարցի արդար և անկողմնակալ քննության, չի համապատասխանում նաև միջազգային ստանդարտներին: Ավելին՝ պետության կողմից տնտեսական սանկցիաների կիրառումը փաստաբանների նկատմամբ համարվում է նրանց անկախությունը խաթարող ակտ:

Սույն պարագայում ակնհայտ է, որ դատարանի կողմից փաստաբաններին տուգանելու սանկցիայի իրավական կառուցակարգերը չեն համապատասխանում միջազգային չափորոշիչներին, այնքանով, որքանով չեն ապահովում փաստաբանի ընթացակարգային իրավունքների պաշտպանությունը և կարող են դիտարկվել որպես փաստաբանի օրինական գործունեության նկատմամբ պետության միջամտություն՝ տնտեսական բնույթի սանկցիա կիրառելու ձևով:

Այս մոտեցումը հիմնավորվում է նաև վերը բերված վիճակագրական տվյալներով՝ դատական սանկցիայի հիման վրա հարուցված 42 կարգապահական գործով 33 սանկցիան (մոտ 78%) անհիմն են եղել: Եթե փաստաբանների նկատմամբ անհիմն դատական սանկցիաներ կիրառվեն արդեն տուգանքների տեսքով, ապա դա սառեցնող ազդեցություն կարող է ունենալ փաստաբանի վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ փաստաբանների պալատը գտնում է, որ «Դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծով առաջարկվող՝ փաստաբանների նկատմամբ տուգանքը՝ որպես դատական սանկցիա կիրառելու իրավակարգավորումը չունի սոցիալական

անհրաժեշտություն, ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության առումով խնդրահարույց է, հակասություններ ունի փաստաբանների անկախության, ինքնակառավարման և վարքագծի միջազգային չափորոշիչների հետ և որևէ կերպ չի նպաստում փաստաբանության ինստիտուտի կառուցակարգային զարգացմանը և արդյունավետության բարձրացմանը:

Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք դատական տուգանքը փաստաբանների նկատմամբ կիրառելու հարվածը Նախագծից հանել:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝
Արա Զոհրաբյան

Կատարող՝
ՀՀ փաստաբանների պալատի
իրավական ապահովման բաժին